ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

0009, ք.Երևան, Իսահակյան 28
28 Isahakyan St., 0009, Yerevan, Armenia
Հեռ. / Tel.: (+374 10) 52 83 70, (+374 10) 52 94 32

REPUBLIC OF ARMENIA
COMMISSION ON TELEVISION
AND RADIO
CHAIRMAN

Էլ. փոստ / E-mail: hakobyan@tvradio.am,
nctr@tvradio.am, secretariate@tvradio.am
www.tvradio.am

N _____

19 օգոստոսի 2022թ.

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ–ՎԻ» ՓԲԸ
«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲԸ
«ՇԱՆԹ» ՍՊԸ
«Ա–ԹԻՎԻ» ՍՊԸ
«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ
«ՇԱՐԿ» ՍՊԸ
«ԴԱՐ-21» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ
«ԱՌՓԻ ՄԵԴԻԱ» ՍՊԸ
«ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

Հարգելի գործընկերներ

Ի պատասխան Ձեր 17.08.2022թ–ի գրության, հայտնում ենք, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը, հաշվի առնելով ներկայացված խնդրի կարեւորությունը, ուսումնասիրելով տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ինչպես նաեւ միջազգային փորձը՝ եկավ հետեւյալ եզրահանգման.

ՀՀ Սահմանադրության 42–րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

ՀՀ Սահմանադրության 196–րդ հոդվածի 1-ին եւ 2–րդ մասերը սահմանում են.

« 1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը:

2. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակային և մրցութային կարգով հատկացնում է եթերային հաճախություններ»:

Վարչական դատարանի արդեն ուժի մեջ մտած երկու վճիռներով, անվավեր են ճանաչվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ ՀՌՀ) 2021 թվականի հունվարի 15-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթողներ ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 14-Ա (թիվ ՎԴ/0813/05/21 վարչական գործ) եւ 2021 թվականի հունիսի 4-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 93-Ա (թիվ ՎԴ/7195/05/21 վարչական գործ) որոշումները:

Ի կատարումն նշված վճիռների՝ ՀՌՀ–ն արդեն վերսկսել է վերը նշված երկու անվավեր ճանաչված որոշումների հետ կապված վարչարարությունը եւ հայտարարել է հանրային մուլտիպլեքսի սլոթի մայրաքաղաքային եւ հանրապետական սփռման նոր մրցույթները, ինչով սպառել է օրենքով իր լիազորությունների շրջանակը՝ ուղղված վճիռների կատարման ապահովմանը:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված այն խնդրին, որ հանրային հեռարձակողի Առաջինի լրատվական ալիքի հեռարձակումը դադարեցվել է համապատասխան դատական ակտի ուժի մեջ մտնելու փաստի ուժով եւ նույնը ենթադրվում է նաև «Արմենիա Թի-Վի» ՓԲ, «Հուսաբեր»ՓԲ «Շանթ» ՍՊ, «Ա-Թիվի» ՍՊ և «Մուլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲ ընկերությունների տեսալսողական ծրագրերի համար, ապա ՀՌՀ–ն գտնում է.

Հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման հայկական հինգ տեսալսողական ծրագրի եթերազրկումը կարող է աննախադեպ լինել ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ միջազգային պրակտիկայի համար: Առաջին հերթին այն ոտնահարում է հանրության շահերը՝ քաղաքացիների բազմակողմանի տեղեկատվություն ստանալու հիմնարար իրավունքը: Այդ իսկ պատճառով ՀՌՀ-ն բազմակողմանի ուսումնասիրելով նշված խնդրի հետեւանքները գտնում է.

- Նախ պետք է հաշվի առնել, որ հանրային մուլտիպլեքսում ներառված տեսալսողական ծրագրերը անվճար են եւ դրանց եթերազրկումը սահմանափակում է քաղաքացիների իրավունքներն ու հնարավորությունները ստանալ բազմակողմանի տեղեկատվություն: Հատկապես սոցիալապես խոցելի այն խավերի, որոնք չունեն ֆինանսական հնարավորություններ օգտվել ցանցային օպերատորների ծառայություններից կամ համացանցից:

- Ոչ պակաս կարեւոր փաստն այն է, որ հանրապետական սփռում ունեցող հեռարձակողների նույնիսկ կարճաժամկետ եթերազրկումը խիստ բացասաբար է անդրադառնալու մեդիածառայություններ մատուցող ընկերությունների վրա՝ նրանք հնարավորություն չեն ունենա կատարելու հարկային եւ այլ պարտավորությունները

պետության առջեւ, պայմանագրային պարտավորությունները գովազդատուների եւ այլ գործընկերների առջեւ, չեն կարողանալու սպասարկեն վարկային պարտավորությունները եւ այլն:

- Եթերազրկումները կառաջացնեն լուրջ սոցիալական խնդիր՝ տեսալսողական ոլորտի հարյուրավոր մասնագետներ կմնան անգործ:

- Եթերազրկումների հետեւանքով խոցելի կդառնա ՀՀ տեղեկատվական անվտանգությունը, քանի որ հանրապետական սփռման տիրույթում կմնան ընդամենը երեք հեռարձակող, որոնցից մեկը օտարերկրյա է եւ ոչ հայերեն լեզվով:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58–րդ հոդվածի 3–րդ մասը սահմանում է. «հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) իրավաբանական անձը լուծարվել է.

2) տեղի է ունեցել լիցենզիայի փոխանցում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

3) լիցենզավորման կամ հեղինակազորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումը չի վերացվել.

5) այդ մասին դիմում է ներկայացվել»:

«Լիցենզավորման մասին» օրենքի 37–րդ հոդվածի 1–ին մասը սահմանում է.

«Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցվելու կամ ֆիզիկական անձի մահվան դեպքերում.

3) եթե լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով պատճառվել է ծանր վնաս.

4) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումները պարբերաբար կատարելու դեպքում.

5) մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ սույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում.

6) լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

7) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.

8) լիցենզիայի ժամկետը լրանալու դեպքում.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Վերը նշված իրավական դրույթների պահանջներից ոչ մեկը չի կարգավորում այն իրավիճակը, երբ դատարանը անվավեր է ճանաչել այն իրավական ակտը, ինչով որոշվել է մրցույթի հաղթողը: Փաստորեն, տեսալսողական ոլորտը կարգավորող գործող օրենսդրությունը չի կարգավորում ստեղծված իրավիճակը եւ կարիք կա օրենսդրական փոփոխությունների: Մասնավորապես, եթե տեսականորեն հաշվի առնենք, որ ՀՌՀ–ի որոշումը բողոքարկած ընկերությունը նույնիսկ հաղթած լիներ հանրային մուլտիպլեքսի հանրապետական սփռման մրցույթում, ապա գործող լիցենզիա ունեցող ընկերություններից առնվազն 4–ը եւս հեռարձակվելու էին: Այսինքն, ամեն դեպքում ներկա օրենսդրական կարգավորմամբ ՀՌՀ–ի որոշումները դատական կարգով ուժը կորցնելու դեպքում անուղղակիորեն կխախտվեն օրինական լիցենզիա եւ հանրային մուլտիպլեքսում հեռարձակման իրավունք ունեցող հեռարձակողների շահերը:

«Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 10 հոդվածը (Արտահայտվելու ազատություն) սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված այլ միջազգային պայմանագրեր եւս կան, որոնք արտահայտվելու ազատության վերաբերյալ դրույթներ ունեն, սակայն նշված կոնվենցիան անմիջական կարգավորում է տեսալսողական մեդիան: Մասնավորապես, Հանձնաժողովի որոշման անվավերության հետեւանքով, Հեռարձակողների եթերը դադարեցնելը չի կարող որեւէ դեպքում դիտարկել ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված

տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակի համատեքստում:

Հանրային մուլտիպլեքսի եւ՛ հանրապետական, եւ՛ մայրաքաղաքային սփռման նոր մրցույթները Հանձնաժողովի կողմից հայտարարվել են, ինչով փաստացի կատարվել է նշված վճիռների պահանջները: Ուստի Հանձնաժողովի «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով տվյալ դեպքում իրավասու չէ դադարեցնելու հանրային մուլտիպլեքսում գործող հեռարձակողների լիցենզիաների գործողությունը: Ավելին, որպես ՀՀ Սահմանադրությամբ անկախ կարգավորող մարմին, Հանձնաժողովը գտնում է, որ հանրային մուլտիպլեքսի սահմանափակ պետական ռեսուրսը, որը հատկացված է տեսալսողական ծրագրերի հեռարձակման նպատակով, ուղղակի չի կարող թափուր մնալ՝ զրկելով թե՛ ՀՀ բնակչությանը անվճար բազմազան տեղեկատվություն ստանալու իրավունքից, թե՛ այդ տեղեկատվությունը տարածող հեռարձակողներին՝ իրենց արտահայտվելու ազատության իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 6–րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 39-րդ հոդվածի 2–րդ մասը սահմանում է. «Օրենսդրության մեջ կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ տվյալ իրավահարաբերության էությանը համապատասխան իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա)»:

Հաշվի առնելով վերոգրյալ իրավական դրույթների պահանջների եւ ստեղծված իրավիճակի համակարգային ուսումնասիրությունը՝ պարզ է դառնում, որ մինչեւ Հանձնաժողովի կողմից հանրային մուլտիպլեքսի հանրապետական եւ մայրաքաղաքային նոր մրցույթների արդյունքում որոշումների կայացումը՝ համապատասխան լիցենզիաների գործողությունը չի կարող դադարել եւ հանրային մուլտիպլեքսում գործող հեռարձակողները կարող են շարունակել իրենց հեռարձակումը: